Բոդենշտէդտ դժբախտաբար ոչինչ չէ հաղորդում մեզ յատուկէն հետաքրքրող խնդրի — Ալէքսանդրապոլի գաւառի բնակիչների թըուի— մասին:

«Ղարաբաղի երկրամասը14) (Distrikt) բաժանւում է Պարսկաստանից եւ Թալիշից Երասխ գետով, Շիրվանից եւ Շեքիից՝ Կուր գետով, իսկ արեւմուտքում նրա սահմաններն են կազմում Գանձակը եւ Նախիջեւանը: Ղարաբաղը, որ Կասպեան լիչխանութեանց ենթակայ երկրամասերի (Provinz) թւում, ամենից մեծն է, ունի համեմատաբար շատ անշնաչ բնակչութիւն: Բնակիչների թիւը մօտ 60,000 է, որի 1/3-ը հայեր, 2/3-ը՝ թաթար: Գլխաւոր քաղաքն է Շուշի, մօտ 6000 բնակչութեամբ»:

Գանձակի գաւառը, Ելիզաւէտպոլ, սահմանակից է հարաւ-արեւելքում Շեքիին եւ Ղարաբաղին, հարաւ-արեւմուտքում նա Հայկական լեռնաշխարհի մի ճիւղով բաժանւում է Երեւանից, արեւմուտքում սահմանակից է Ալէքսանդրապոլի եւ Թիֆլիսի գաւառներին, իսկ հիւսիսում՝ Կախէթիային եւ Բելոկանի շրջանի մի մասին:

Գլխաւոր քաղաքը՝ Գանձակ, ունի մօտ 8000 բնակիչ, թաթար եւ հայ՝ խառն: Հայերի թիւը կազմում է 1/3-ը: Գանձակը ստացել է Ելիզաւէտպոլ անունը նրա համար, որ ռուսներն այդ քաղաքը գրաւել են Սուրբ Եղիսաբէթի տօնի օրը: Գանձակը, ինչպէս եւ այս երկրների դրեթէ բոլոր քաղաքները, անցեալում գտնուել է, փոխնիփոխ, հայերի, պարսիկների եւ թուրքերի տիրապետութեան տակ: 1804-ին առել է իշխան Ցիցիանովը:

«Ախալցխայի Փաշայութիւնը սահմանակից է հիւսիսում Քարթալինային (Բուն Վրաստան, Թիֆլիս) եւ Իմերէթիային (Քութայիս): Մի բարձր, անտառապատ լեռնաշղթայ նրանց բաժանում է իրարից: Արեւելքում բաժանւում է, Քարթալինայի լերկ լեռների ճիւղաւորութիւններով, Բորչալուի շրջանից, որ առաջ Սոմխէթի եւ Թրիալէթի անուններն էր կրում: Արեւմուտքում Ախալցխայի (կամ Մեսխական) լեռներով բաժանւում է Գուրիայից եւ տաճկական տիրապետութեան տակ մնացած երկրամասերից: Գլխաւոր քաղաքն է Ախալցըխան:

«Համաձայն նորագոյն տուեալների,— շարունակում է Բոդենշտէդտ,— բնակիչների (Ախալցխա քաղաքի) թիւը, մէջը հաշուելով եւ զօրամասերը, 12,000 է, որի հազիւ 1/3ը՝ ընիկ, տեղացի: Ռուս կառավարութեան պատւէրով 1832-ին կազմուած՝ Փաշայութեան մի վիճակագրութեան համաձայն՝ միմիայն քաղաքը, տաճիկների օրով, հաշւում էր 50,000 բնակիչ. իւկ այսօր ամբողջ նահանգը հազիւ այդչափ բնակչութիւն ունի: Փաշայութեան աչքի ընկնող միւս կենտրոններն են՝ Ախալքալաք, Ասպինձա եւ Խըրթվիզ, որոնք լաւ ամրացրած փոքրիկ բերդաքաղաքներ են, առաւելապէս հայ բնակչութեամբ»:

Բոդենշտէդտ չէ մանրամասնում որոշակի, թէ Ախալցխայի փաշայութեան ընդհանուր թուի — մօտ 50,000 — ո՛ր մասն է կազմել հայ տարրը եւ ո՛ր մասը՝ միւս ժողովուրդները (վրացի, յոյն, ղարափափախ, քուրտ, հրեայ, դնչու, որոնց մէկ-մէկ յիշատակում եւ նկարագրում է հեղինակը): Եւ սակայն այդ հարցը դէթ որոշ չափով պարզւում է նրա հետեւեալ բառերով (էջ 161).

«Ախալցխայի փաշայութիւնը թէեւ սկզբնապէս վրացական երկրամաս է եղած, սակայն նրա շատ խառն բնակչութեան մեծամասնութեան տեսակէտից (այժմ) հայկական է: Հէնց այդ պարագան է առիթ տուել Բոդենշտէդտին, իր գրքի Ախալցխայի փաշայութեան վերաբերող թուական եւ փաստական նկարագրութեանը կցել «Հայկական Շրջանի» նկարագրութեան, որպէս մէկ հատուածը հայաբնակ երկրամասերի (161):

Ցաւոնի է արդէն, որ Ախալցխայի եւ Ախալքալաքի հայութիւնը Էրզրումից է գաղթած, որով եւ փոխած՝ այդ գաւառների ցեղագրական նախկին պատկերը:

Ինչ վերաբերում է Ախալցխա քաղաքին, Բոդ. ասում է. «Նրա բնակչութեան գլխաւոր տարրը այսօր կազմում են հայերը, որոնց մեծ մասը Էրզրումից է եկել, քաղաքը տաճիկների կողմից պարպուելուց յետոյ... Երբեմն բազ-

14) Distrikt-ը գաւառից մեծ միաւոր է, թէեւ նահանգից էլ փոքր. աւելի շուտ դրանց միջին տեղն է բռնում: